ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1, հեռ.՝ (060) 536-402

«ԲՈՌՍԱ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի Գ. Պողոսյան

Աբովյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բոռսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև 03.04.2026 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38» ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:
Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարել իր պարտականությունները»:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:
05.05.2026 թվականին ընկերությանը ծանուցվել է, որ անհրաժեշտ է սկսել պայմանագրի շրջանակներում Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում

դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքները:
Ըստ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող օրացուցային գրաֆիկի ընկերությունը ստանձնել է հստակ պարտավորություններ՝ աշխատանքների առանձին տեսակներն իրականացնել հետևյալ փուլերով և ժամկետներում.
1.Հողային աշխատանքներ՝ մինչև 20 օր.
2.Դրոշի կառուցում՝ մինչև 90 օր.
3.Լուսավորություն՝ մինչև 110 օր
4.Մայթեր՝ 120 օր.
Աբովյան համայնքի Աբովյան քաղաքում դրոշակաձողի և Հայաստանի Հանրապետության դրոշի տեղակայման աշխատանքների իրականացման նպատակով իրականացված մրցույթի պայմաններով սահմանվել է պահանջ՝ ներկայացնել շինարարության իրականացման համար նախատեսված բնակելի հասարակական և արտադրական նշանակության կառույցների 1-ին կամ 2-րդ դասի համապատասխան լիցենզիա:
Ողջ ընթացքում պատվիրատուի և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմի կողմից իրականացվել է բազմաթիվ այցելություններ շինհրապարակ: Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները,որի մասին 03.06.2026թվականի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ իրականացնող կազմակերպության՝ «Արտակ Մարտիրոսյան Համլետի» ԱՁ-ի տնօրեն Ա. Մարտիրոսյանի և 04.06.2026 թվականի Աբովյանի համայնքապետարանի պատասխանատու ստորաբաժանման անդամ Ա. Առուշանյանի կողմից ներկայացվել են գրություններ: Սակայն ինչպես համայնքապետարանի աշխատակիցների, այնպես էլ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից ներկայացված պահանջներից հետո «ԲՈՌՍԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մինչ օրս համապատասխան դասի լիցենզիան չի ներկայացվել:
Համայնքի կողմից ուսումնասիրվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տեղեկագրում հրապարակված 02.03.2026 թվականի դրությամբ նոր ընթացակարգով լիցենզավորված կազմակերպությունների ցանկը, սակայն «ԲՈՌՍԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ համապատասխան դասի լիցենզիայի առկայությունը չի հաստատվել:
Ինչպես նաև Աբովյանի համայնքապետարանը 12.06.2026 թվականին Ե-2890 գրությամբ էլեկտրոնային եղանակով նախազգուշացրել է «ԲՈՌՍԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և տրամադրել է խախտումները վերացնելու հնարավորություն 3/երեք/ աշխատանքային օրվա ընթացքում: Զգուշացվել է նաև, որ սահմանված ժամկետում աշխատանքների չմեկնարկման, պահանջվող լիցենզիայի չներկայացման կամ բավարար հիմնավորումների բացակայության դեպքում Աբովյան համայնքը կձեռնարկի պայմանագրով և գործող օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ՝ պայմանագրի միակողմանի լուծման և Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգերի կիրառման գործընթացը, ինչպես նաև կազմակերպության նկատմամամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար անհրաժեշտ գործողությունների նախաձեռնումը: Սակայն մինչ օրս ընկերության կողմից որևէ աշխատանք չի կատարվել:

Հարկ ենք համարում պարզաբանել, որ շինարարական տեխնոլոգիական տրամաբանությամբ՝ առնվազն հողային աշխատանքները ենթակա են եղել պարտադիր կատարման մինչև 2026 թվականի մայիսի 25-ը: Հետևաբար հողային աշխատանքները ժամանակին չավարտելը շղթայաբար հանգեցրել է հաջորդող բոլոր կարևորագույն փուլերի չկատարմանը: Արձանագրում ենք նաև, որ օրացուցային գրաֆիկի տևական խախտումները և Ընկերության անգործությունը փաստում են այն մասին, որ պայմանագրով նախատեսված ողջ շինարարական աշխատանքների իրականացումն ու դրանց վերջնական ավարտը դարձել է անհնար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե կապալառուն ժամանակին չի սկսում պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ,որ դրա ժամանակին ավարտելն ակնհայտ անհնար է դառնում, պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վնասների հատուցում» :

Պայմանագրի 3.1.4 կետով պատվիրատուին վերապահված է իրավունք՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, որի իրացման հիմքերը հիմնավորում ենք ստորև.

1.Առկա է պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը.

Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, «Եթե կապալառուն ժամանակին չի սկսում պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ,որ դրա ժամանակին ավարտելն ակնհայտ անհնար է դառնում, պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վնասների հատուցում» :

2.Առկա է Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքը.

Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե՝ Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը/ներառյալ օրացուցային գրաֆիկը/.

3.Պայմանագրի առարկան ըստ օրենսդրության ենթադրում է 1-ին կամ 2-րդ կարգի լիցենզիայով իրականացվող աշխատանքներ, ապա 3-րդ կարգի լիցենզիա ունեցող կազմակերպությունը փաստացի իրավասու չէ այդ աշխատանքները կատարել որը կարող է հանգեցնել պայմանագրի պատշաճ կատարման անհնարինություն:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներով և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի պահանջները՝ Աբովյանի համայքնապետարանի և «ԲՈՌՍԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 03.04.2026 թվականին «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-26/38» ծածկագրով կնքված Պայմանագիրը միակողմանի լուծվում է Պատվիրատուի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր (համաձայնագիր)

կնքելու իրավունքից: Ընդ որում սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և ավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման Հավելված N1-ի 32-րդ կետի 16-րդ ենթակետը՝ Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը կներկայացվի լիազոր մարմին՝ «ԲՈՌՍԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման ապահովում 2 857 488 / երկու միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր ութսունութ/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում 1 904 992/ մեկ միլիոն ինը հարյուր չորս հազար ինը հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ, միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարին սպասարկող բանկ՝ գումարները գանձելու նպատակով:

Ընդունել ի գիտություն.

Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետերով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. Բաբայան

19.06.2026թ.